# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնումների գնահատող հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 17-ի №21/17.09.2024 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն:

Գնանշման հարցման ծածկագիրը՝ **ՀՋ-ԳՀ-ԿՄ-21/17.09.24:**

Պատվիրատուն՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, որը գտնվում է ք.Հրազդան, Գործարանային-1 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել 130 հատ ՕՈւ-5 /ОУ-5/ տեսակի կրակմարիչների մատակարարման պայմանագիր:

Մատակարարումը կկատարվի մինչև 2024 թվականի հոկտեմբերի 31-ը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով կամ Էլ. փոստ info@raztes.am:

Հայտերի բացումը տեղի կունենա «ՀրազՋԷԿ» ԲԲԸ ք.Հրազդան, Գործարանային 1 հասցեում, 2024 թ. **սեպտեմբերի 26 -ին ժամը 11$^{00}$-ին:**

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Էդիտա Ավետիսյանին, հեռ.՝+374 93 900 652:

Պատվիրատու՝ «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ

*Հաստատված է*
*ՀՁ-ԳՀ-ԿՄ-21/17.09.24 ծածկագրով*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի*
*17.09.2024թ. №21/17.09.2024 որոշմամբ*

# Հ Ր Ա Վ Ե Ր

1. Սույն հրավերը տրամադրվում է ՀրազԶԷԿ ԲԲԸ կողմից 2024թ. սեպտեմբերի 17-ին տեղեկագրում հրապարակված՝ ՀՁ-ԳՀ-ԿՄ-21/17.09.24 ծածկագրով գնման գնանշման հարցման մասին հայտարարության հիման վրա:
2. Մրցույթի ծածկագիրը ՀՁ-ԳՀ-ԿՄ-21/17.09.24
3. Գնման առարկայի բնութագիրը՝ **Կրակմարիչ:**

**Տեխնիկական բնութագիր**

Կրակմարիչ ածխաթթվային ՕՈՒ-5-ը հանդիսանում է հրդեհաշիջման սարքավորում, որը նախատեսված է $CO_2$ (ածխաթթու գազ) միջոցով կրակ մարելու համար: Այն առավել արդյունավետ է հրդեհների համար, որոնք առաջանում են էլեկտրական սարքավորումներից կամ նյութերից, որոնք պահանջում են ոչ հրդեհավտանգ շնչող նյութի կիրառություն:

ՕՈՒ-5-ի հիմնական բնութագրերը՝
Ծավալը: ՕՈՒ-5 կրակմարիչի ծավալը 5 կգ (${CO_2}$ գազի քանակը):
Հրդեհի դասը: Օգտագործվում է B և C դասի հրդեհների համար, որոնք ներառում են հեղուկներ և գազեր:
Խառնուրդ: Օգտագործվում է մաքուր $CO_2$ գազ, որը չի առաջացնում մնացորդներ:
Օգտագործման պայմանները: Իրականացնում է արագ և անվտանգ կրակմարում, հատկապես էլեկտրական սարքավորումների համար, քանի որ գազը չի անցկացնում էլեկտրականություն և չի վնասում սարքավորումները:
Օգտագործման հեռավորություն: Թույլ է տալիս 1-2 մ հեռավորությունից կրակմարում իրականացնել:
Օգտագործման ջերմաստիճան: Աշխատում է −20°C-ից մինչև +50°C պայմաններում:
Օգտագործման առավելություններ՝
Մնացորդի բացակայություն: Չի թողնում քիմիական մնացորդներ՝ իդեալական է կրակ մարելիս սենյակներում, որտեղ անհրաժեշտ է մաքուր միջավայր պահպանել:
Անվտանգություն: $CO_2$-ը չի վնասում էլեկտրական սարքավորումները և չի անցկացնում էլեկտրականություն:
Հեշտ օգտագործում: Թեթև և շարժական սարքավորում, որը հարմար է տեղափոխման և օպերատիվ արձագանքման համար:
Դյուրավառ հեղուկների և հալած պինդ մարմինների մարում (B դաս)
Դյուրավառ գազեր մարող (C դաս)
Էլեկտրական լարերի մարում, էլեկտրական կայանքներ (դաս E)
Դասակարգումը ըստ մոդելի հրդեհի աղբյուրի (դաս B) - 55B
Դասակարգումը ըստ հրդեհի մոդելի աղբյուրի (դաս C) - C
Դասակարգումը ըստ մոդելի հրդեհի աղբյուրի (դաս E) - E (մինչև 10000 Վ)
Օգտագործման տեւողությունը (ոչ պակաս), - 8 վրկ.
Աշխատանքային ճնշում, ՄՊա - 5,88
Կրակմարիչի տրամագիծը (ոչ ավելի), մմ - 133
Կրակմարիչի բարձրությունը (ոչ ավելի), մմ - 720
Լիցքի քաշը, կգ - 5
Ծառայության ժամկետը (ոչ պակաս), 10 տարի
Աշխատանքային և պահպանման ջերմաստիճանի միջակայք, °C -40...+50

4. Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի ընտրությունը կատարվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

5. Մրցույթն իրականացվում է 1 փուլով: Մատակարարումը կկատարվի պայմանագիրը կնքելու օրվանից մինչև **2024 թվականի հոկտեմբերի 31-ը:**

6. Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

7. Հայտով նարկայացվող առաջարկված գինը նշվում է ՀՀ դրամով, գրված թվերով և տառերով և ներառում է հաշվարկման կարգը:

8. Հայտով նարկայացվող առաջարկված գնի հաշվարկը պետք է ներառի հայտատուի բոլոր ծախսերը, ներառյալ փոխադրումը ՀրազՁԷԿ-ի տարածք:

9. Հայտերը կբացվեն 2024թ. սեպտեմբերի 26-ին ժամը 11:00-ին նշանակված նիստում, ըստ հայտերի գրանցամատյանի հերթականության, հասցեն՝ ք. Հրազդան, 2302, Գործարանային 1:

10. Սույն գնման գործընթացում գնահատող հանձնաժողովը ղեկավարվում է Գնումների մասին ՀՀ օրենքի և Հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվող այդ կազմակերպությունների հաստատած գնումների կատարման կարգերով:

11. Պայմանագիրը կկնքվի մրցույթում ընտրված մասնակցի հետ անգործության ժամկետը լրանալուց հետո:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Է.Սանամյան